ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԿՈՒ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՌՑԱՆՑ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2020

Կրթության որակի ապահովումն առօրյայում ինքնին աշխատատար և միասնական ջանքեր պահանջող գործընթաց է: Առցանց ուսուցման պարագայում այն առավել մեծ ջանքեր ու նորարարական մոտեցում է պահանջում:

Նոր կորոնավիրուսի համավարակի պայմաններում աշխարհն արտառոց իրավիճակում է հայտնվել: Ստեղծված իրադրությունը մեծ մարտահրավեր է ոչ միայն պետությունների, տնտեսության, առողջապահական համակարգի, այլ նաև կրթական համակարգի համար:

Երկրում հայտարարված արտակարգ դրության պայմաններում միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ստիպված են առցանց սկզբունքով ուսուցում իրականացնել՝ ապահովելու իրենց ուսանողների կրթության անընդհատությունը:

Ուսուցման առցանց իրականացումը ենթադրում է նոր մոտեցումներ նաև որակի ապահովման ոլորտում: ՄՈՒՀ-ն այս պայմաններում էլ շարունակում է մնալ կրթության որակի պատասխանատուն:

Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը (ՈԱԱԿ), հաշվի առնելով ստեղծված իրավիճակի մարտահրավերները և միասնական լուծումներ գտնելու անհրաժեշտությունը, մասնագիտական ուսումնական հաստատություններին գործընկերային աջակցություն ցուցաբերելով՝ առաջարկում է առցանց ուսուցման որակի ապահովման որոշ ուղենիշներ՝ հիմնված միջազգային մոտեցումների վրա:

Մինչ այժմ ՄՈՒՀ-երն այս կամ այն չափով կիրառում էին առցանց ուսուցման տարատեսակ գործիքներ՝ որպես լրացում լսարանային դասավանդմանը: Ամբողջությամբ առցանց ուսուցումը և գնահատումը փորձություն են ինչպես դասախոսների, այնպես էլ ՄՈՒՀ-երի համար, որոնց կանոնակարգերն ու քաղաքականությունները որպես կանոն առցանց ուսուցման վերաբերյալ համապատասխան դրույթներ չունեն:

Սույն ուղենիշները կոչված են միասնական մոտեցում ձևավորելու դասավանդման և գնահատման ձևերի փոփոխության, ուսանողների առաջընթացի գնահատման և ավարտական աշխատանքների հարցերում՝ ստեղծված իրավիճակում հիմնական նպատակը համարելով ուսումնառության վերջնարդյունքների ձեռքբերման խնդիրը:

Շեշտենք նաև, որ այս իրավիճակը ՄՈՒՀ-երի համար մարտահրավեր լինելուց բացի, առցանց ուսուցում իրականացնելու հսկայական փորձի ձեռքբերման հնարավորություն է, որը հետագայում հայաստանյան մասնագիտական ուսումնական համակարգի զարգացման ռազմավարական ուղիներից մեկը պետք է դառնա: Ուսուցման այս եղանակը կարող է դառնալ ուսումնական գործընթացն էլ ավելի արդյունավետ կազմակերպելու միջոց, որը հնարավորություն կտա աշխատող և սովորող ուսանողներին ավելի արդյունավետ ներգրավել ուսումնական գործընթացում, իսկ

դասախոսներին՝ լինել ավելի ուսանողակենտրոն՝ ուշադրության կենտրոնում պահելով ուսանողների կարիքները:

1. ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս պետք է կազմակերպվի դասավանդումն ու ուսումնառությունը առցանց ուսուցման պայմաններում, որպեսզի կրթության որակը չտուժի:

1.Առցանց ուսուցում իրականացնելիս ցանկալի է հաշվի առնել հետևյալը՝

- Առցանց դասավանդումը և գնահատումը վիրտուալ ուսումնական միջավայրում պարզապես դասախոսություններ տեղադրելը չէ: Այս պարագայում ևս դասավանդումը պետք է պլանավորված և կառուցված լինի նույն պատասխանատվությամբ և մանրամասնությամբ, ինչպես լսարանային դասավանդման ժամանակ:

- Անհրաժեշտ է հստակ նկարագրել ծրագրի ուսումնառության վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդները:

- Անհրաժեշտ է տվյալներ հավաքել՝ արդյոք բոլոր ուսանողներն ունեն համապատասխան սարքավորումներ և հեռահաղորդակցության հնարավորություններ, որն անհրաժեշտ է առցանց ուսուցման և գնահատման մեջ լիարժեք ներգրավվելու համար: Համընդհանուր ինքնամեկուսացման նախազգուշական միջոցառումների պայմաններում ուսանողներն իրենց բնակարաններում կարող են սահմանափակ տարածք ունենալ առցանց աշխատելու համար: Այս առումով ՄԿՈՒ հաստատություններին անհրաժեշտ է փնտրել այլընտրանքային լուծումներ:

- Անկախ թվային գրագիտության մակարդակից՝ հնարավոր է՝ ուսանողներն ու դասախոսներն ավելի քան երբևէ SS համակարգերից օգտվելու աջակցության կարիք ունենան: Ուստի հարկ կլինի այս հարցերում մասնագետի աջակցություն ապահովել հավասարապես բոլորին:

- Որակի ապահովման չափանիշները ենթադրում են, որ ՄԿՈՒ հաստատությունները պետք է ունենան բավարար ռեսուրսներ և ուսանողների աջակցության ծառայություններ՝ ապահովելու բարձրորակ կրթություն: Սա վերաբերում է նաև առցանց ուսուցմանը: Անհրաժեշտ է ցուցաբերել ճկունություն. նույնական լուծումները ոչ բոլորին են համապատասխանում:

- Առցանց դասավանդումը գուցե նույնաչափ հարմար չլինի բոլոր դասընթացների համար: Վերջնարդյունքների ապահովման համար՝ անհրաժեշտ է, որ դասախոսական կազմը դասավանդումը հարմարեցնի առցանց ձևին: Հնարավոր է, որ որոշ դասախոսներ աջակցության կարիք ունենան այս հարցում:

- Կան բազմաթիվ ուղեցույցներ, որոնք ներկայացնում են, թե ինչպես կարելի է ուսուցումն իրականացնել առցանց ծրագրերի միջոցով: Անհրաժեշտ է դասախոսական կազմին հասանելի դարձնել այդ ուղեցույցները (օրինակ՝ https://bit.ly/2UT1kHp , https://bit.ly/3aAlnRG , https://bit.ly/39suhzi):

2. ԱՌԱՋԸՆԹԱՑ

2. Ցուցաբերելով ճկուն մոտեցում՝ դասընթացին հատկացվող տեսական և գործնական բաղադրիչները կարելի է փոխել՝ ավելի շատ ժամանակ տրամադրելով ուսանողի ինքնուրույն աշխատանքին և ընթացիկ գնահատմանը:

3. Դասախոսները պետք է վերահիմաստավորեն ուսումնառության վերջնարդյունքները յուրաքանչյուր դասընթացի համար: Դրանք պետք վերապլանավորվեն այնպես, որ առցանց ուսուցման պայմաններում ուսանողներն իրատեսական հնարավորություն ունենան հասնելու ակնկալվող վերջնարդյունքներին:

4. Անհրաժեշտ կլինի իրականացնել ուսանողների և դասախոսների ծանրաբեռնվածության գնահատում՝ հետագայում լրացնելու դասավանդման, ուսումնառության և գնահատման հնարավոր բացերը:

5. Որոշ դասընթացներ պահանջում են սահմանված քանակությամբ գործնական ժամեր կամ գնահատման հատուկ մեխանիզմներ: Այդ պատճառով հարկ է վերապլանավորել ծրագիրն այնպես, որ իրավիճակի կայունացումից հետո ուսանողները հնավարություն ունենան ձեռք բերել սահմանված պրակտիկ հմտությունները:

6. Առցանց ուսուցմամբ առաջացած խնդիրներին ինչ լուծում էլ հաստատությունը տա, մինչև վերջնական որոշում կայացնելը հարկավոր է խորհրդակցել ուսանողների հետ առցանց եղանակով:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

Գնահատման համակարգում ցանկացած փոփոխություն անդրադառնում է որակի ապահովման բազմաթիվ ոլորտների՝ գնահատման համակարգի կառուցվածք, կանոնակարգեր, բողոքարկում, քաղաքականություն: Գնահատման համակարգում փոփոխություններից բխող վերափոխումները մի շարք ոլորտներում ակնհայտ են: Բայց հարկավոր է հաշվի առնել հետևյալը.

7. Անհրաժեշտ է ապահովել քաղաքականության, ընթացակարգերի և կանոնակարգերի ճկուն կիրառում՝ հաշվի առնելով չնախատեսված կամ մեղմացնող հանգամանքները: ՄԿՈՒ հաստատությունները կարող են մշակել ծրագրերի իրականացման որոշակի անցումային ռազմավարություն:

8. Գնահատման այլընտրանքային մեթոդներ մշակելիս հարկավոր է հաշվի առնել, որ ուսանողները պետք է հասնեն ծրագրով սահմանված վերջնարդյունքներին:

9. Եթե ձեր կանոնակարգերը կամ քաղաքականությունները չեն ապահովում բավարար ճկունություն, կարիք կա դրանք վերանայել: Հարկ կլինի առանձնացնել

աշխատակազմի այն մասնագետներին, որոնք կկարողանան արագ մշակել անհրաժեշտ փոփոխությունները և դրանք հաստատել առցանց հանդիպումների ժամանակ:

10. Եթե խմբի մեծության կամ այլ պատճառներով հնարավոր չէ գնահատել ուսանողին, ապա հարկավոր է ջանքեր գործադրել առաջարկելու այլընտրանքային մեթոդներ, որոնք համապատասխանում են դասընթացի/մոդուլի ուսումնառության արդյունքներին:

11. Գնահատման ռազմավարությունը վերանայելիս կարելի է վերաբաշխել ուսանողների հանձնարարությունները: Օրինակ՝ հիմա ուսանողները կարող են կենտրոնանալ անհատական աշխատանքների վրա, իսկ որոշ առաջադրանքներ կարող եք թողնել հետագային և անգամ տեղափոխել հաջորդ կիսամյակ: Գրագողության դեպքերի բացառման համար անհրաժեշտ է ուսանողներին տալ անհատականացված հանձնարարականներ: Բաց թողնվածը լրացնելու համար հետագայում կարելի է համագործակցել հարակից առարկաների դասախոսների հետ:

12. Պատրաստ եղեք ընդունելու սովորականից շատ բողոքարկումներ: Սա նշանակում է, որ բողոքներն ընդունող և քննող մասնագետները պետք է պատրաստ լինեն ծագած ցանկացած խնդրի վերաբերյալ արդար և հետևողական որոշում կայացնելուն: Այստեղ ևս ակնկալվում է հատուկ կարողություններով անձնակազմի ընտրություն:

13. Այս բոլոր դեպքերում շատ կարևոր է արտաքին և ներքին համագործակցությունը արտաքին և ներքին շահակիցների հետ: